ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՅԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ

Հունվար ամսին ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Ռիչմոնդ քաղաքում, Միացյալ Աստվածաբանական ճեմարանում և Քրիստոնեական Դաստիարակության Պրեսբիտերյան դպրոցում, տեղի ունեցավ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Բարեկարգյալ բողոքական Եկեղեցիների համաշխարհային միության ներկայացուցիչների համատեղ ժողովը, որին մասնակցում էր նաև Հայ Առաքելական Եկեղեցին: Ուղղափառ Եկեղեցիներից մասնակցում էին նաև Անտիոքի Սիրիական, Եգիպտոսի Ղպտի և Հնդկաստանի Մալաբար ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Բարեփոխյալ Եկեղեցիները ներկայացնում էին Չեխիայի, Լիբանանի, Հնդկաստանի, Շոտլանդիայի և ԱՄՆ-ի պատգամավորները: Ժողովը նախագահում էին Բարեկարգյալ Եկեղեցիների համաշխարհային միության գլխավոր քարտուղար դոկտ. Միլան Օպոսենսկին և Տ. Վիգեն եպս. Այքազյանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Միջեկեղեցական թվով չորրորդ այս հանդիպման նպատակը երկխոսության միջոցով Եկեղեցիների միջև փոխըմբռնման խորացումն էր:

Քրիստոնեաբանության, Ս. Գրքի և ավանդության, Եկեղեցու բնույթի և առաքելության հարցերի շուրջ ծավալված երկխոսության արդյունքում ընդունվեց մի փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանա հետագա երկխոսության համար: Այն տեղի կունենա մեկ տարի անց՝ 1999 թ. հունվարին, Ս. Եփրեմի աստվածաբանական ճեմարանում (Դամասկոս):